# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«01» փետրվարի 2019 թվականի N 30

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Համաձայն 17.03.2009թ. թիվ 600 գրության Ձեզ է ներկայացվում 2019 թվականի հունվար ամսին Հացիկ համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Նշված ժամանակահատվածում արձակվել է 13 որոշում , արձակվել է 2 կարգադրություն:

Առդիր 17 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. Եղիազարյան

01.02.2019թ.
գ. Հացիկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«12 » հունվարի 2019 թվականի N 1

## ԳՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 2019 թվականի գնումների պլանը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի կարիքների համար աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման կամ ապրանքների ձեռքբերման համար սահմանել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Արտավազդ Ասատրյան /աշխատակազմի առաջատար մասնագետ/

Անդամներ՝ Գագիկ Թումանյան /աշխատակազմի առաջատար մասնագետ/

Ռիտա Ավագյան /աշխատակազմի 1-ին մասնագետ/

Ստեփան Սարգսյան /ավագանու անդամ/

Գնումների համակարգող՝ Կարինե Պողոսյան /աշխատակազմի գլխավոր մասնագետ/

2. Գնումների համակարգողին՝ կազմել և հաստատել պատասխանատու ստորաբաժանման և գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների հաշվառման մատյանը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

Գ.Հացիկ
12.01.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hatsik.armavir@mta.gov.am

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15 » հունվարի 2019 թվականի N 2

## ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ, հիմք ընդունելով գնման համակարգող Կարինե Պողոսյանի 2019 թվականի հունվարի 14-ի թիվ 1 եզրակացությունը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի կարիքների համար բենզինի և դիզելային վառելիքի ձեռք բերման համար ձևավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Արտավազդ Ասատրյան /աշխատակազմի առաջատար մասնագետ/
Անդամներ՝ Գագիկ Թումանյան /աշխատակազմի առաջատար մասնագետ/
Սարգիս Ասլանյան /աշխատակազմի 1-ին մասնագետ/
Ստեփան Սարգսյան /ավագանու անդամ/

Գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Կարինե Պողոսյանին /աշխատակազմի գլխավոր մասնագետ/

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

Գ.Հացիկ
15.01.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«30» հունվարի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 13

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԼԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ինքնակամ կառուցված շենք, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ Ազատ Մարտիրոսյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվարկված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտի իրավունք և քանի որ հողամասը նրա կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 5-ը և հիմք ընդունելով Հարություն Մարտիրոսյանին դիմումը

**Որոշում եմ**

1. Ճանաչել Հարություն Կառլենի Մարտիրոսյանի (ծնված 24.09.1967թ.) սեփականության իրավունքը 0.71 հա ընդհանուր մակերեսով (04-058-244-008 կադաստրային ծածկագրով 0.21 հա հողամասի, 04-058-242-0.28 ծածկագրով 0.38 հա հողամասի և 04-058-002-022 ծածկագրով 0.12 հա տնամերձ հողամաս) հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.133 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ:
2. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. մարզերի միավորված ստորաբաժանմանը կատարել վերը նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 30.01.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«29» հունվարի 2019 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 12

ԱԶԱՏ ԿԱՌԼԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ինքնակամ կառուցված շենք, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ Ազատ Մարտիրոսյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվարկված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտի իրավունք և քանի որ հողամասը նրա կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 5-ը և հիմք ընդունելով Կարլեն Մարտիրոսյանին դիմումը

**Որոշում եմ**

1. Ճանաչել Ազատ Կառլենի Մարտիրոսյանի (ծնված 01.01.1958թ.) սեփականության իրավունքը 04-058-244-007 կադաստրային ծածկագրով 0.58 հա հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.0119 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ:
2. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. մարզերի միավորված ստորաբաժանմանը կատարել վերը նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 29.01.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«29» հունվարի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 11

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

**Որոշում եմ**

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Արմեն Լյովայի Արտավազդյանին պատկանող բնակելի տանը՝ (ծածկագիր 04-058-018-030) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 5-րդ փողոց 25 շենք 1:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 29.01.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«24» հունվարի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 10

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 15.5498 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77 -րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հացիկ համայնքի ավագանու 2019 թվականի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի սեփականություն հանդիսացող 15.5498հա հողամասերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու մասին» N6 որոշումը`

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 15.5498հա հողամասերը բաց մրցույթով վարձակալության տրամադրելու համար յուրաքանչյուր հողամասի վարձավճարի մեկնարկային գնի չափը սահմանել տվյալ տարածքի հողի հարկի դրույքաչափին հավասար գումար, մեկնարկային քայլը` մեկնարկային վարձավճարի հինգ տոկոսի չափով:
2. Տալ համապատասխան հայտարարություն «Հայստանի Հանրապետություն» օրաթերթում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 24.01.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«24» հունվարի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 9

## ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» N7 որոշումը

**Որոշում եմ**

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Արմեն Իսկանդարյանին պատկանող 0.2818հա բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասին՝ (ծածկագիր 04-058-006-025 ), տալ հասցե Արմավիր-Իսահակյան-Գյումրի խճուղի 27 հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Համայնքի ղեկավարի նախկին 11.01.2019թ-ի թիվ 1 որոշումն համարել անվավեր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 24.01.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«24» հունվարի 2019 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 8

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ, հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 139 եզրակացությամբ և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի ավագանու 19.11.2018թ-ի թիվ 39 որոշումը

Որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքում գտնվող Հացիկ համայնքի բնակիչ Արմեն Իսկանդարյանի սեփականություն հանդիսացող 04-058-006-025 ծածկագրով 0.2818 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 24.01.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«23» հունվարի 2019 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 7

ՎԱՐԴԱՆ ՓՈՂԱԴՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ինքնակամ կառուցված շենք, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ Աբրահամ Խաչատրյանի ընտանիքին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվարկված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտի իրավունք և քանի որ հողամասը նրա ընտանիքի կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 5-ը և հիմք ընդունելով Վարդան Փոլադյանի դիմումը

Որոշում եմ

1. Ճանաչել Վարդան Սեդրակի Փոլադյանի (ծնված 05.08.1966թ.) Սոնիկ Ռուբենի Փոլադյանի (ծնված 28.08.1969թ.), Լիլիթ Վարդանի Փոլադյանի (ծնված 26.08.1979թ.) և Վարդգես Վարդանի Փոլադյանի (ծնված 31.07.1990թ.) սեփականության իրավունքը 04-058-212-003 կադաստրային ծածկագրով 0.38 հա հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.0079 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ:
2. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. մարզերի միավորված ստորաբաժանմանը կատարել վերը նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Գ. Հացիկ 23.01.2019թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«23» հունվարի 2019 թվականի

## ՈՐՈՇՈՒՄ N 6

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԵԼԱ ԱՐԱԲՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ԵՐԵՄՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Բելա Արաբյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ, 7-րդ փողոց 10/1 հասցեում գտնվող օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված ըստ ժառանգության իրավունքի վկայագրի ձեռք բերված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով. հիմք ընդունելով Բելա Արաբյանի դիմումը

### Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ գյուղի 7-րդ փողոց 10/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Բելա Միխայիլի Արաբյանի (ծնված 18.05.1937 թվականին) և Արմեն Գարեգինի Երեմյանի (ծնված 08.10.1966 թվականին) իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը համաձայն Արմավիրի մարզի Նոտարական գրասենյակի գրանցված գրանցամատյան 7520, ժառանգական գործ 663 վկայականի հիման վրա, 0.11 հա օրինական տնամերձ հողամասի վրա գտնվող թիվ 1 բնակելի տան՝ 65.1 քառ.մ (կառուցված 1968թ.), բնակելի տան՝ 59.9 քառ.մ (կառուցված 1970թ.), բնակելի տան՝ 11.4 քառ.մ (կառուցված 1970թ.) 2 լողարանի՝ 9.0 քառ.մ (կառուցված 1972թ.), 3 խոհանոցի՝ 8.25 քառ.մ (կառուցված 1972թ.), 4 կաքսայատան՝ 7.8

քառ.մ (կառուցված 1972թ.), աստիճանների՝ 2.1 քառ. մ (կառուցված 1972 թ.), 5 ավտոտնակի՝ 25.2 քառ.մ (կառուցված 1971 թ.), 6 ծածկի՝ 12.2 քառ.մ (կառուցված 1971թ.), 7 անասնաշենքի՝ 19.6 քառ.մ (կառուցված 1982թ.), և 8 ծածկի՝ 9.8 քառ. մ (կառուցված 1982թ.) նկատմամբ:

2. 2014 թվականին կառուցված 4.1 քառ. մ մակերեսով շինությունը համարել ինքնակամ:
3. 007-007 ծածկագրով 0.11 հա հողամասին կից 0.02հա ավել տարածքը, որը չի գերազանցում տնամերձ հողամասի 20%-ը (ընդհանուրը կազմում է 0.13 հա), չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Բելա Արաբյանին և Արմեն Երեմյանին
4. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Բելա Միխայիլի Արաբյանի (ծնված 18.05.1937 թվականին) և Արմեն Գարեգինի Երեմյանի (ծնված 08.10.1966 թվականին) իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տան և շենք- շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

23.01.2019թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«23» հունվարի 2019 թվականի

## ՈՐՈՇՈՒՄ N 5

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ – ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՎ ԱԼՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Մնացական Գալստյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ, 16-րդ փողոց 31 հասցեում գտնվող օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով. հիմք ընդունելով Մնացական Գալստյանի դիմումը

### Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ գյուղի 16-րդ փողոց 31 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Մնացական Արշալույսի Գալստյանի (ծնված 10.02.1960 թվականին) և Ալմարա Վլադիկի Մկրտչյանի (ծնված 19.09.1968 թվականին) իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.12 հա օրինական տնամերձ հողամասի վրա գտնվող թիվ 1 բնակելի տան՝ 88.30 քառ.մ (կառուցված 1990թ.), 2 անասնաշենքի՝ 28.50 քառ.մ (կառուցված 1990թ.) և խորդանոցի՝ 12.80 քառ.մ (կառուցված 1990թ.)
2. 029-001 ծածկագրով 0.12հա հողամասին կից 0.024հա ավել տարածքը, որը չի գերազանցում տնամերձ հողամասի 20%-ը, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր

սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Մնացական Գալստյանին և Ալմարա Մկրտչյանին:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 16-րդ փողոց 31 հասցեում գտնվող Մնացական Գալստյանի տնամերձ հողամասին կից 0.0882 հա բնակավայրի նշանակության տնամերձ հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի կարգով վաճառել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչներ Մնացական Արշալույսի Գալստյանին և Ալմարա Վլադիկի Մկրտչյանին, քանի որ նրանք 1991 թվականից սկսած օգտագործել և բարեխղճորեն վճարել են իրենց տնամերձ հողամասից ավել 0.0882 հա հողամասի հարկերը:

4. Վաճառվող հողամասի արժեքն է՝ (882x222)x30%=58742.0 ՀՀ դրամ
ա) 0.0882 հա բնակավայրի նպատակային նշանակության բնակելի տան կառուցապատման բնակավայրի հողատեսքի համար 58 742.0 ՀՀ դրամ:

5. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Մնացական Արշալույսի Գալստյանի (ծնված 10.02.1960 թվականին) և Ալմարա Վլադիկի Մկրտչյանի (ծնված 19.09.1968 թվականին) իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին և 3-րդ կետում նշված բնակելի տան, շենք-շինությունների ու հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 4-րդ կետով սահմանված գումարը վճարելու պահից, սակայն ոչ ուշ այն ընդունելուց 15 օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

23.01.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«21» հունվարի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 4

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

Մնացական Գալստյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող 0.0882 հա բնակավայրի նպատակային նշանակության տնամերձ հողամասի վրա ինքնակամ հողազավթում է իրականացվել: Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի N912-Ն որոշմամբ սահմանված կարգով այն ճանաչվել է համայնքային սեփականություն: Հողամասը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 16 փողոց 31 հասցեում:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ

**Որոշում եմ**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 16-րդ փողոց 31 հասցեում գտնվող 0.0882 հա բնակավայրի նշանակության տնամերձ հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի կարգով վաճառել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Մնացական Արշալույսի Գալստյանին:
2. Վաճառվող հողամասի արժեքն է՝ (882x222)x30%=58742.0 ՀՀ դրամ
   ա) 0.0882 հա բնակավայրի նպատակային նշանակության բնակելի տան կառուցապատման բնակավայրի հողատեսքի համար 58 742.0 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2-րդ կետով սահմանված գումարը վճարելու պահից, սակայն ոչ ուշ այն ընդունելուց 15 օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

գ. Հացիկ 21.01.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«17» հունվարի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 3

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

**Որոշում եմ**

1. Քաղաքացի Հենրիկ Հրանտի Թովմասյանին պատկանող բնակելի տանը՝ (ծածկագիր 04-058-018-013) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 4-րդ փողոց 30 տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 17.01.2019թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«14» հունվարի 2019 թվականի

## ՈՐՈՇՈՒՄ N 2

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

**Որոշում եմ**

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Մնացական Արշալույսի Գալստյանին (ծնված 10/02/1960) պատկանող բնակելի տանը՝ (ծածկագիր 04-058-029-001) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 16-րդ փողոց 31 տուն հասցեում:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

գ. Հացիկ 14.01.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 098 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«11» հունվարի 2019 թվականի

# ՈՐՈՇՈՒՄ N 1

## ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» N7 որոշումը

**Որոշում եմ**

1. Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Արմեն Իսկանդարյանին պատկանող 0.2818հա բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասին` (ծածկագիր 04-058-006-025 ), տալ հասցե Արմավիր-Իսահակյան-Գյումրի 27:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում` պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 11.01.2019թ.